

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 41/3

27 օգոստոսի 2013 թ.

Քննարկվեց <Անարանդ և Ռոբերտ Բեջանյան փաստաբանական գրասենյակ> ՍՊԸ 19.08.2013 թ-ի թիվ 2 գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի 06.08.2013 թ-ի թիվ 232063 որոշման դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 2013 թ-ի ապրիլ ամսվա եկամտային հարկի հաշվարկը հարկային տեսչություն ուշ ներկայացվելու համար ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 06.08.2013 թ-ի թիվ 232063 որոշմամբ <Անարանդ և Ռոբերտ Բեջանյան փաստաբանական գրասենյակ> ՍՊԸ տնօրեն Ռ.Բեջանյանի նկատմամբ կիրառվել է <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով սահմանված պատասխանատվության միջոցը՝ գումարով 20.000 դրամ:

<Անարանդ և Ռոբերտ Բեջանյան փաստաբանական գրասենյակ> ՍՊԸ գազատում մասնավորապես նշված է.

Մինչև 2013 թ-ը առանց ժամկետի խախտմամբ թղթային եղանակով ժամանակին ներկայացրել եմ հարկային բոլոր հաշվետվությունները:

2013 թ-ի հունվար ամսից փոխվել են հարկային հաշվետվություն ներկայացնելու ձևը և կարգը: Նոր ձևի էլեկտրոնային եղանակով եկամտահարկի հաշվետվություն ներկայացնելու համար ներառյալ ապրիլ ամսվա հաշվետվության ներկայացնելը, օգտվել եմ հարկային տեսչությունում տեղակայված տերմինալից: Ապրիլ ամսվա հաշվետվությանը մայիս ամսին ցանկանում էի ամեն կերպ ինքնուրույն ուղարկել, սակայն չէր ստացվում: Սույն թվականի մայիս ամսվա 18-ը և 19-ը եղել են շաբաթ և կիրակի: Վերջի օրով՝ 20.05.2013 թ-ին, երբ գտնվում էի հարկային տեսչությունում՝ ժամը 16-ի սահմաններում, կապի պատճառով տերմինալից հնարավոր չէր օգտվել: Մինչև գրեթե ժամը 18:00-ը բազմաթիվ անգամ փորձելուց հետո ինձ բացատրեցին, թե ինչպես ինքնուրույն կազմեմ և ուղարկեմ հաշվետվությունը և ես շարունակեցի փորձել ինքնուրույն, սակայն մինչև ժամը 24:00-ն ոչինչ չստացվեց: Հաջորդ օրը՝ 21.05.2013 թ-ին, երբ արդեն լրացել էր ներկայացնելու ժամկետը, դատական նիստի ավարտից հետո կրկին եղա հարկային տեսչությունում իմ նոթբուկով, կրկին ինձ բացատրեցին, թե ինչպես ինքնուրույն ուղարկեմ հաշվետվությունը, քանի որ ինձ հետ չէի վերցրել գաղտնաբառը և այն անգիր չէի հիշում, որպեսզի տերմինալից ուղարկեմ: Այս անգամ 21.05.2013 թ-ին ինձ հաջողվեց կազմել հաշվետվությունը, սակայն ոչ մի կերպ չէի կարողանում ստորագրել այն, իսկ աշխատանքային ժամն արդեն ավարտվել էր: Այդ պատճառով էլեկտրոնային հաշվետվությունը ուղարկել եմ հաջորդ օրը: Ուշացնելու պատճառը հայտնեցի իրավաբանական բաժնի պետին, սակայն նա ասաց, որ պատճառը էական չէ:

Հարգարժան հանձնաժողով, չէ որ վարչական իրավախախտումը պետք է կատարվի դիտավորությամբ, այլ ոչ թե տեխնիկական միջոցից օգտվել չկարողանալու պատճառով, ինչը դեռևս նորություն էր սույն թվականի մայիս ամսին: Ի գիտության հայտնեմ, որ դրանից հետո մայիս, հունիս և հուլիս ամիսների հաշվետվություններն արդեն ուղարկել եմ ինքնուրույն, թեև հուլիս ամսվա հաշվետվությունը նույնպես մեծ դժվարությամբ կարողացա ստորագրել:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի 06.08.2013 թ-ի թիվ 132063 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով <Անարանդ և Ռոբերտ Բեջանյան փաստաբանական գրասենյակ> ՍՊԸ տնօրենի բերած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու

ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործի քննարկման ընթացքում պարզվեց, որ վարչական վարույթի իրականացման ընթացքում խախտվել են <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի պահանջները: Մասնավարապես, վարչական իրավախախտման վերաբերյալ 01.08.2013 թ-ի արձանագրության, ինչպես նաև վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 06.08.2013 թ-ի թիվ 232063 որոշման կազմման ընթացքում խախտվել են <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 255-րդ, 279-րդ և 281-րդ հոդվածներով սահմանված պահանջները: Բացի այդ, 06.08.2013 թ-ի թիվ 232063 որոշման պատճենը կողմին է ուղարկվել <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 06.08.2013 թ-ի թիվ 232063 որոշումը, իսկ գործը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ